

ԱՐԺԱՆԹԻՆԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Հայ երեք եկեղեցական յարանուանութիւններուն առաւել կամ նուազ չափերով գոյառումը Լատինական Ամերիկայի մէջ բնական հետեւանքն է Արժանթինի, Ուրուկուայի, Պրագիլի, Զիլէի, Վենեզուելայի եւ Մեքսիքոյի մէջ հայոց սիւսումին: Ներկայ ուսումնասիրութիւնը նուիրուած է Լատինական Ամերիկայի հայ կաթողիկէ յարանուանութեան կեդրոն՝ Արժանթինի համայնքի սկզբնական պատմութեան:

Արժանթինահայ կաթողիկէ փոքրաթիւ համայնքին ակունքները պէտք է որոնել Կիլիկիոյ, կեդրոնական Անատոլիոյ եւ հայկական Միջագետքի մէջ: Արդարեւ, այս յարանուանութեան անդամները Հարաւային Ամերիկա մեկնած են հիմնականին մէջ Անգարայէն, Մարաշէն եւ Մարտինէն: Վերջինս, ինչպէս յայտնի է, իւրայատուկ պարագայ մըն էր՝ հայ-արաբ խառն ամուսնութիւններու իր բաւական բարձր տոկոսով, արաբախօսութեամբ եւ մականուններու «եան» ըր բացակայութեամբ: Մարաշի եւ Անգարայի կաթողիկէները թրքախօս էին: Մարաշի համայնքը ԺԹ. դարուն ծնունդ առած է՝ Հայ Առաքելական Եկեղեցւոյ ծոցին մէջ տեղի ունեցած վարչական վէճի մը հետեւանքով, իսկ Անգարայի պարագան մասնաւորապէս կարեւոր է ընկերարանական տեսանկիւնէ, ինչպէս մատնանշած է Հ. Լեւոն Վրդ. Չէփեան. «Անգարայի համայնքը հայերէնի գործածութիւնը կորսնցուցած էր եւ թրքախօս դարձած էր երկար ժամանակէ ի վեր: Գոնէ պէտք է աւելցնել, թէ այդ վիճակը միայն կաթողիկէ համայնքներուն յատուկ չէր. Օսմանեան Կայսրութեան մէջ որոշ հայ առաքելական համայնքներ իրենց լեզուական գործածութեան վարժութիւնը կորսնցուցած էին: Ամէն պարագայի, փաստ է, որ այն վայրկեանէն երբ Օսմանեան Կայսրութիւնը հայ կաթողիկէները ճանչցաւ որպէս ինքնավար համայնք, անգարացիները իրենք գիրենք ոչ այլ բան համարեցին, քան «կաթողիկէ ազգ» (katolik millet): Ազգութեան եւ կրօնքի այս շփոթը կամ նոյնացումը, որ կայսրութեան ազգադաւանական համակարգին կողմէ քաջալերուած էր՝ «միլլէթ» իրաւական գաղափարի հիմքով, դարաւոր երեւոյթի մը մէջ կ'արմատանար. որոշ թիւով հայեր, Հռոմէական Եկեղեցւոյ հետ հաղորդութեան գաղափարին փարելով, աւելի կամ պակաս չափով կորսնցուցած էին իրենց հայկականութեան գիտակցութիւնը: Հետեւաբար, պէտք չէ

զարմանալ, երբ փարիզեան արուարձաններու մէկ անկիւնը կամ Մարտէյի մէջ, Անգարա ծնած ալեւոր հայ կաթողիկէի մը իր ակունքներուն մասին հարցուի, ան պարզապէս պատասխանէ որ «կաթողիկէ» է²:

Ազգութեան եւ դաւանանքի շփոթը («կաթողիկէ» = «ոչ հայ»), որ իր հակապատկերն ալ ունի («հայ» = «ոչ կաթողիկէ»), պատճառներէն մէկը եղած է, որ կաթողիկէները արժանթինահայ համայնքի կեանքէն յարաբերաբար կղզիացած ըլլան:

Պատահական ներկայութիւններ հաշուի չառնելով, ծանօթ իրողութիւն է, որ արժանթինահայ համայնքը ծագում առած է 1909-14ին սկսած գաղթալիքով: Առաջին Աշխարհամարտի նախօրեակին, համայնքը շուրջ 3000 հոգի կը հաշուէր³: 1912ին, անակնկալ կերպով Պուէնոս Այրէս ժամանած է Տ. Պաղտասար ՔՀՆյ. Պարասաթեանը, որ առաջին հայկական պատարագը մատուցած է Չատիկին՝ 15 Ապրիլ 1912ին: Այս դէպքը Արժանթինի մէջ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ կազմակերպութեան հիմնաքարը հանդիսացած է:

1910ականներու վերաբերող նիւթերը սակաւաթիւ են: Արխիւային միակ տրամադրելի աղբիւրը 1911ին հիմնուած, Արժանթինի մէջ հայկական առաջին կազմակերպութեան՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան (ՀԲԸՄ) Պուէնոս Այրէսի մասնաժողովի արձանագրութիւններն ու նամակներն են, որոնք ընդհանրապէս համայնքին մասին թանկագին տեղեկութիւններ կը պարունակեն:

Այսպէս, 17 Ապրիլ 1917ի ՀԲԸՄի տեղական Վարչական Խորհուրդի ժողովին օրակարգին երկրորդ կէտը արաբախօս հայերու վկայագիրներուն մասին էր: Մարտինի հայերը («քիլտանի») հաւաքական խնդրագիր մը յղած էին, իրենց հայութիւնը փաստող վկայագիրներ հայցելով: Եօթանասուն խնդրարկու եղած էր, որոնցմէ 47ը զուտ հայեր, իսկ մնացեալները՝ հօր կամ մօր կողմէ հայ: Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Հոգաբարձութիւնը նման վկայագիրներ հայթայթողը ըլլալով, ժողովը որոշած էր անոր դիմել՝ կցելով մանրամասն ցանկ մը եւ իր յանձնարարականը⁴:

Պատերազմի ընթացքին, Առաքելական Եկեղեցին՝ Colectividad Religiosa Armeniana («Հայկական Կրօնական Համայնք») անունով, արժանթինեան իշխանութիւններէն իրաւասու նկատուած էր ինքնութեան թուղթեր յանձնելու: Դաշնակից կառավարութիւններու հիւպատոսներէն վաւերացուած այս փաստաթուղթերը ազատ ելումուտ, ինչպէս եւ աշխատելու իրաւունք կու տային զանոնք կրողներուն⁵:

Շարաթ մը ետք՝ 24 Ապրիլ 1917ի Վարչական Խորհուրդի ժողովին ըսուեցաւ, թէ Հոգաբարձութեան նամակ գրուած էր այս խնդրին առնչութեամբ, սակայն վերջինս, այս կամ այն պատճառով, մերժած էր զուտ հայ չեղողներուն վկայագիր տալ⁶: Հետաքրքրական է նշել,

որ Հոգաբարձութիւնը դաւանական որեւէ առարկութիւն ըրած չէր, Հակառակ անոր, որ Մարտինի Հայերը կաթողիկէ էին:

1918ի կէսերուն կազմուեցաւ Հայ Ազգային Միութիւնը, որ խարխափումի շրջանէ մը ետք Սեպտեմբեր ամսուն կայացաւ որպէս կազմակերպութիւն: Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ ներկայացուցիչ Երուանդ Խաչիկեանը ընտրուեցաւ ատենապետ, իսկ Մելքոն Էպէեան (աւետարանական)՝ ատենադպիր⁷: Կաթողիկէ ներկայացուցիչի մը չգոյութիւնը ցոյց կու տայ, որ յարանուանութիւնը տակաւին կազմակերպուած չէր եւ մինչեւ միութեան անկումային ճգնաժամը (1920), կաթողիկէ Հայերը առհասարակ յիշատակուած չեն: Արժանթինահայոց պատմութեան մասնագէտ Նարսիս Պինայեանի սկզբնական պնդումը, թէ «արդէն 1918ին կաթողիկէներ որպէս կազմակերպուած խումբ գոյութիւն ունեցած են»⁸, առկայ փաստերով չի հաստատուիր⁹:

Հայ Ազգային Միութեան փաստական կազմալուծումը պատճառահանդիսացաւ մէկ ու կէս տարի տեւող կազմակերպական տաղնապի մը, որուն ելք մը գտնելու համար, 18 Նոյեմբեր 1921ին գումարուած խորհրդակցական ժողովը առաջարկեց գաղութային կեդրոն մը ստեղծել, որուն կարենան անդամակցիլ բոլոր Հայերը՝ առանց քաղաքական կամ կրօնական խտրականութեան¹⁰: 7 Դեկտեմբերին կայացած 18 հոգինոց նոր ժողով մը որոշեց հիմնել Հայ Տունը՝ «ընկերութիւն մը որուն նպատակը պիտի ըլլայ արժանթինարեակ Հայ գաղութի մէջ վառ պահել ազգային եւ կրօնական զգացումները եւ օգնել իր անդամներէն անոնց որոնք նիւթական եւ բարոյական աջակցութեան կը կարօտին»¹¹: Կանոնագրի նախագիծը հիմնադիր անդամներու ընդհանուր ժողովի մը կողմէ վաւերացուեցաւ 25 Յունուար 1922ին եւ կազմակերպութեան անունը Հայ Գաղութային Կեդրոն դարձաւ: 7 Մայիսին նոր ընդհանուր ժողով մը վարչութեան ընտրութիւն կատարեց (ատենապետ՝ Արմէն Պերկամայի, փոխ-ատենապետ՝ Փանոս Երզրտումեան)¹², իսկ 25 Յունիսին, Սան Սուան 1537 փողոցին վրայ վարձու կեդրոնատեղիի մը բացումը տեղի ունեցաւ:

Հայ կաթողիկէ համայնքի կազմակերպութեան առաջին, ոչ-պաշտօնական փուլը սկսաւ 1922ին, Զմմառի վանքի Պատրիարքական Միարանութեան անդամներէն Հայր Հանթուշի ժամանումով¹³: Հայ կաթողիկէ Պատրիարք Պօղոս Պետրոս ԺԳ. Թէրզեանին յղած նամակին մէջ ան յայտնած էր, թէ բազմաթիւ Հայ հաւատացեալներ չիրեն կը դիմէին մկրտութեան եւ պսակի խորհուրդներուն, ինչպէս եւ հիւանդներուն օգնութեան համար: Սակայն, Պուէնոս Այրէսի մէջ իր պաշտօնավարութիւնը միայն մէկ տարի տեւեց¹⁴:

Համայնքին պաշտօնական ծնունդը երկու տարի ետք տեղի ունեցած է: Քեմալականներու յաղթանակէն ետք Հռոմ ապաստանած Հ.

Մկրտիչ Վրդ- Գազազեան (1893-1958), 1924ին Առաքելական Այցելու Յովհաննէս Արք. Նազլեանի հետ տեսակցութիւն մը ունեցաւ: Նազլեան Արեւելեան Սրբ. Ժողովին առաջարկեց Գազազեանի առաքումը Պուէնոս Այրէս՝ Արժանթինի հայ կաթողիկէներու հոգեկան կարիքները գոհացնելու համար: Ժողովը իր հաւանութիւնը տուաւ եւ Մայիս 1924ի գրութեամբ զայն յանձնարարեց՝ երկրի եկեղեցական իշխանութիւններուն: Գազազեան Պուէնոս Այրէս հասաւ 10 Յունիս 1924ին¹⁵:

Նորեկ կրօնաւորը անմիջապէս ընդհ. տեղապահ Գերպ. Պարթոլով ֓ Փիքատոյին ներկայացած է: Չկարենալով գինքը հոռմէադաւան ծուխի մը մէջ տեղաւորել, Փիքատո առժամեայ կերպով խոստովանանք ստանալու եւ պատարագ մատուցելու իրաւասութիւն տուաւ Գազազեանին: Փիքատոյի օգնութեամբ, հայ վարդապետը Սակրամենտեան Հայրերու բնակարանին մէջ հիւրընկալուեցաւ, նախ՝ Սան Մարթին 1039 փողոցը եւ ապա՝ Գոնտարքօ 545: Ասկէ զատ, Ս. Հոգիի Հայրերէն արտօնութիւն ստացաւ Կուատալուփէի Տիրամօր մատրան մէջ (Մանսիօտա 3851) ամէն Կիրակի հայածէս Ս. Պատարագ մատուցելու¹⁶:

Առաջին պատարագը մատուցուեցաւ 29 Յունիս 1924ին, 30 հոգիի ներկայութեամբ: Այս թիւը, բացի ձայնաւոր պատարագներու պարագային, ընդհանրապէս անփոփոխ պիտի մնար: Երկու օր առաջ կաթողիկէ էլ Փուէպլօ (El Pueblo, «Ժողովուրդը») օրաթերթին մէջ լոյս տեսած ծանուցում մը կը յայտնէր, թէ Գազազեան ամէն Շաբաթ կէսօրէ ետք ժամը 3-5ին հայերէն, թրքերէն ու ֆրանսերէն խոստովանանքներ պիտի ընդունէր¹⁷:

1915-22ին կանգ առնելէ ետք, հայերու գաղթը դէպի Արժանթին վերսկսած էր Իզմիրի Աղէտէն ետք, գլխաւորաբար աղէտեալներու եւ Կիլիկիոյ պարպումէն վերապրողներու ժամանումով: 1922-24ին, համայնքին հիմնական աշխատանքը նորեկներուն օգնութեան հասնիլը եղած էր: Թուական աճի պատճառով անհրաժեշտութիւնը զգացուեցաւ Գաղութային Կեդրոնի ընդլայնման, ինչպէս նաեւ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիի աղօթատեղիի մը շինութեան, որ Կեդրոնի կանոնադրին մէջ չէր յիշուած որպէս նպատակ:

Հոս պէտք է դիտել տալ, որ թէեւ Կեդրոնը համագաղութային նկարագիր մը ունէր, գործնականին մէջ ան կ'աշխատէր որպէս եկեղեցւոյ հոգաբարձութիւն մը, որմէ կախում ունէին թէ՛ հոգեւոր հովիւին գործունէութիւնը, թէ՛ կիրակնօրեայ եկեղեցական արարողութիւններու իրագործումը:

1924ին, ՀԲԸՄի Պուէնոս Այրէսի մասնաճիւղը Հայ Գաղութային Կեդրոնին եկեղեցիի մը շինութիւնը առաջարկեց, քանի որ իր կանոնադրային սահմանափակումները կ'արգիլէին այդ գործին ստանձնումը¹⁸: 1925ին, Կեդրոնը բոլոր միութիւններուն եւ երեւելի անհատ-

ներու մասնակցութեամբ քանի մը ժողովներ գումարեց, որոնք յանգեցան Հայաստանեայց Եկեղեցւոյ Վարչական Խորհուրդի Հիմնադիր ժողովին՝ 22 Հոգիի ներկայութեամբ, 29 Նոյեմբեր 1925ին: Հոս, Իսրայէլ Արսլանի ատենապետութեամբ վարչութիւն մը ընտրուած է՝ կանոնագիր մը պատրաստելու, եկեղեցիի եւ դպրոցի համար շէնք մը գնելու, եւ առ այդ հանգանակութեան մը սկսելու պարտականութիւններով²⁰:

28 Նոյեմբեր 1925ին, այսինքն՝ վերոյիշեալ ժողովէն երեք օր առաջ, Արժանթինի եկեղեցական իշխանութիւնները վաւերացուցած էին Հայ Կաթողիկէ Ընկերութեան ստեղծումը՝ Խորխէ Թերզիպաշեանի ատենապետութեամբ: Ընկերութիւնը երկու վարչութիւններ ունէր՝ Փալերմօ (ուր կը գտնուէր կեդրոնը՝ Նիքարակուա 4728) եւ Պառաքաս-Պոքա թաղամասերուն մէջ²⁰: Հաւանական է ենթադրել, որ Հայ երկու յարանուանութիւնները միաժամանակ եւ դիպուածով իրենց ներքին կազմակերպութեան ձեռնարկած ըլլային:

11 Ապրիլ 1928ին, 75 Հոգինոց ներկայութեամբ ժողովի մը ընթացքին տեղի ունեցաւ Շինարարական Յանձնախումբի ստեղծումը՝ Գաղութային Կեդրոնի շէնքի ու եկեղեցիի հարցերով զբաղելու համար, որուն դիւանը (Արսլան՝ ատենապետ, Յովհ. Պարգեւեան՝ ատենադպիր, Պերկամալի՝ գանձապահ) 31 Մայիսին ընտրուեցաւ: Այդ յանձնախումբը Գաղութային Կեդրոնէն անկախ էր, քանի որ չէր կրնար կապուիլ ոչ-դաւանական հաստատութեան մը հետ, որուն պիտոճէն «կազմուած էր երեք յարանուանութեանց պատկանող անդամներու տուրքերով», կը գրէ Արսլան²¹:

Առհասարակ, Գաղութային Կեդրոնի ընդհանուր ժողովները յատկանշուած էին անդամներու բաւական ժլատ մասնակցութեամբ: Յաճախ, առաջին գումարումը չէր կայանար՝ մեծամասնութեան չգոյութեան հետեւանքով, եւ ժողովը տեղի կ'ունենար միայն երկրորդ գումարումին, երբ անդամներու որեւէ թիւ բաւարար կը սեպուէր:

1928ի ընդհանուր ժողովը բացառութիւն եղած չէ: Յ Մայիսի ձախող գումարումէն ետք, տեղի ունեցաւ երկրորդ գումարումը 23 Մայիսին, միայն 15 Հոգիի (18 ձայն) մասնակցութեամբ: Վարչական ընտրութեան, հետեւեալ անձերը առաւելագոյն քուէները ստացան. - Առաքել Էօրէճեան, Աբրահամ Գրաճեան, Տիրան Եուսուֆեան, Հայկ Մօսկոֆեան, Արշակ Արսլան, Երամ Պէքեարեան, Յովակիմ Ապտեան: Գրաճեան՝ բազմազբաղ ըլլալով, հրաժարեցաւ պաշտօն ընդունելէ²²:

Նորընտիր վարչութեան առաջին նիստը տեղի ունեցաւ 18 Յուլիսին, այսինքն՝ գրեթէ երկու ամիս ետք: Այս փաստը կազմակերպական տագնապի մը գոյութիւնը կը մատնանշէ, որուն մանրամասները յայտնի չեն, բայց որուն ստուգութիւնը կարելի է մակարբերել հետեւեալ իրողութենէն: Նիստին արձանագրութիւնը կը բացուի հետեւեալ

պարբերութեամբ. «Ա.- Դիւանի ընտրութիւնը պ. Ա. Պէրկամալիի առաջարկով բոլորի հաւանութեամբ ընտրուեցաւ հետեւեալ կերպով.

«Ի. Արծրունի	ատենապետ
«Մ. վրդպտ. Գազազեան	փոխ-ատենապետ
«Ս. Թամլեան	ատենադպիր
«Գ. Հէրպէկեան	փոխ-ատենադպիր
«Ա. Պէրկամալի	գանձապետ
«Պ. քհնյ. Պարասաթեան	խորհրդական
«Պ. Գալայճեան	խորհրդական» ²³ :

Ինչպէս կը տեսնուի, Մայիսին ընտրուածներէն ո՛չ մէկը ընդգրկուած է վարչական նոր կազմին մէջ, ուր ներկայ էին երկու վաստակաւոր եւ ազդեցիկ անձնաւորութիւններ՝ Արսլանն ու Պերկամալին, եւ կաթողիկէ ու առաքելական հոգեւոր հովիւները՝ Մկրտիչ Վրդ. Գազազեան եւ Պաղտասար Քհնյ. Պարասաթեան: Երջանի մասին միակ վաւերագրական աղբիւրը՝ Արսլանի յուշերը, լռութեամբ կ'անցնին այս դէպքին վրայէն, միայն յիշելով այս դիւանի կազմը հետեւեալ նկատողութեան որպէս շարունակութիւն. «Հայ. Գաղ. կեդրոնի Ծրագիր-կանոնադրին համաձայն ոեւէ յարանուանական խտրութիւն գոյութիւն չունենալով, իր կազմը աւելի ազգային հանգամանք կը կրէր: Ասոր ապացոյցը կը տեսնուի իր անդամներու շարքին մէջ, ինչպէս նաեւ 1928 Յուլիս 16ին ընտրութեան հետեւանքով իր դիւանի կազմը...»²⁴:

Առայժմ որեւէ աղբիւր չկայ, որ լուսարանէ այս ընտրութեան հանգամանքները: Բայց Գազազեանի ընտրութիւնը որպէս փոխ-ատենապետ ցոյց կու տայ կաթողիկէ համայնքին վերելքը եւ, թերեւս, Արսլանի ու Պերկամալիի կողմէ գայն սիրաշահելու փորձ մըն էր: Պէտք է մոռնալ, որ Արժանթիւնը մեծաւ մասամբ կաթողիկէ երկիր մըն է, ու հռոմէական դաւանանքը՝ անոր պետական կրօնը:

Այս փորձը, սակայն, շատ կարճատեւ եղաւ, ու դարձեալ հոս Արսլան կը լռէ այս մասին: Արդարեւ, Գաղութային կեդրոնի տոմարներէն կը պարզուի, որ Յ Օգոստոսին, վարչական երրորդ նիստին ու ընտրութենէն հազիւ երեք շաբաթ ետք, «վարչութեան փոխ Ատենապետ Մ. Վ. Գազազեանի հրաժարականը կարդացուեցաւ որ ներփակ կը կրէր իրեն պատճառաբանութեան փաստաթուղթը. հրաժարականը ընդունուելով, որոշում տրուեցաւ շրջ ժողովին ընտրել մէկ ուրիշ օգտակար հանդիսացող անձ մը»²⁵:

Ինչո՞ւ տեղի ունեցած էր այս յանկարծական հրաժարականը: Բուն պատճառը նշուած է վարչութեան 1928-27ի տեղեկագրին մէջ, որմէ կ'իմացուի նաեւ, թէ Գազազեանի պաշտօնը թափուր մնացած էր. «Վարչութիւնս՝ 16 Յուլիս 928, իր Ա. նիստին կազմեց դիւանը...: Քանի մը ամիս [sic] այս կազմով շարունակելէ յետոյ, Բ. Ատենապետ

Մկրտ. վրդ Գազազեան հրատարեցաւ վարչութենէս իր Օգոստ. 5, [1]926 թուակիր նամակով, պատճառաբանելով թէ տեղւոյս պապական եկեղեցական իշխանութիւնը արտօնած չէր իր մասնակցութիւնը: Որով վարչութիւնս՝ մնացեալ վեց անդամներով՝ վարեց իրենց վրայ դրուած այս ծանր պաշտօնը մինչեւ այսօր»²⁶ (ընդգծումը մերն է - Վ.Մ.):

Այս պատճառաբանութիւնը, ըստ ամենայնի, հիմնաւոր էր. 3 Օգոստոս 1924էն ի վեր Գազազեան միայն իրաւասութիւն ունէր պատարագ մատուցանելու եւ խոստովանութիւն ընդունելու²⁷:

Համայնքին մէջ կառույցներու խաչածեւումը անխուսափելի բխումի եւ պառակտումի կ'առաջնորդէր: Հայաստանեայց Եկեղեցւոյ վարչական Խորհուրդի եւ Շինարարական Յանձնախումբի գործունէութիւնը Գաղութային Միութիւնը ընկլուզելու կոչուած էր, վարչական կեդրոնացումին (երեք մարմիններուն ատենապետութիւնը նոյն անձին՝ Արսլանի ձեռքն էր) եւ Ֆինանսական աղբիւրներու սակաւութեան հետեւանքով: Գաղութային կեդրոնի բաժանումի երեւութական պատճառը կը թուի եղած ըլլալ արժանթիւնեան վաւերաթուղթեր անջատարար ձեռք ձգելու հայ կաթողիկէ Համայնքին կեցուածքը: Մինչ այդ, այդ աշխատանքները կը կատարուէին անշարժութեան մատնուած, բայց իրաւական ճանաչում վայելող Հայ Ազգային Միութեան կնիքով ու ստորագրութեամբ²⁸:

Արժանթիւնի մէջ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ պատմութեան նուիրուած իր անտիպ ուսումնասիրութեան մէջ, Տէր Նորայր Աւագ Քահանայ Տէր Խորէնեան պնդած է, թէ 29 Նոյեմբեր 1925ի Հայ Գաղութային կեդրոնի վարչական ժողով մը նոր կանոնագիր մը խմբագրած էր, որ նոյն օրը վաւերացուած էր վարչութեան կողմէ: Ըստ Տէր Խորէնեանի, կանոնագիրը Գաղութային կեդրոնը կը վերանուանէր «Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Հոգարարձութիւն» եւ արժանթիւնեան իշխանութիւններուն կը ներկայացուէր առ ի վաւերացում: Այսպէսով, «մինչ այդ գործակցող եւ անդամակցող Հայ Բողոքական եւ Կաթողիկէ անձնաւորութիւններ, որոնց կարգին Հայ Կաթողիկէ վարդապետ, Հայր Յովհ. Գազազեան կը գրկուին անդամակցութենէ եւ կը դադրին գործակցելէ»²⁹:

Այս տեսակէտները առնուազն վիճելի են: Արդարեւ, ըստ Հոգարարձութեան 29 Նոյեմբեր 1925ի ընդհանուր ժողովի արձանագրութեան, այդ օրը եկեղեցական կազմակերպութիւն մը հիմնուած էր, որուն կանոնագիրը ապագային պիտի խմբագրուէր: Գաղութային կեդրոնի ժողով չէ եղած յիշեալ օրը. յաջորդ ժողովը տեղի ունեցած է 4 Դեկտեմբեր 1925ին: Միւս կողմէ, անդամակցութեան գրկումի վերոյիշեալ վարկածը տրամաբանական չէ՝ այլապէս, յաջորդ տարին Գազազեանի ընտրութիւնը որեւէ հիմնաւորում պիտի չունենար: Հեռա-

ցումի որեւէ հրահանգ գոյութիւն ունեցած չէ, ոչ ալ կրնար ունենալ:
 4 Նոյեմբեր 1928ի արտակարգ ընդհանուր ժողովի վաւերացումին
 ներկայացուած կանոնագրի ծրագրին Գ. յօդուածը կ'ըսէ, թէ «ամէն
 երկսեռ հայ եւ հայ ծնողաց Արժանթիւնի մէջ ծնած երկսեռ զաւակներ,
 որոնք 18 տարին լրացուցած են, բարի համբաւի եւ վարքի տէր են,
 կարող են գործօն անդամ ըլլալ»³⁰: Յաջորդող տասնամեակներուն,
 Հայ կաթողիկէ Եկեղեցւոյ հաւատացեալներ Հայաստանեայց Առաքե-
 լական Եկեղեցւոյ Հոգաբարձութեան անդամակցած եւ նոյնիսկ վար-
 չական շատ կարեւոր պաշտօններու հասած են³¹: Ասիկա, հակառակ
 անոր, որ նոյն կանոնագրին Ա. յօդուածին գ. պարբերութիւնը կ'ըսէ-
 «ի մի բան, Հոգաբարձութիւնը պիտի ներկայացնէ Հայց. Առաք. Եկե-
 ղեցւոյ հաւատացեալներու ամբողջութիւնը եւ պիտի ստանձնէ Հայ
 Եկեղեցւոյ վերաբերեալ բոլոր կրօնական եւ բարոյական հարցերը,
 Եկեղեցական իշխանութեանց առջեւ պաշտպան հանդիսանալով
 անոնց իրաւասութեանց եւ օրհանալով ձեռք բերել անոնց բարօրու-
 թիւնը»³²:

Արսլանի հաշտարար դիրքը անբաւարար եղաւ պառակտումը
 կանխելու համար. «Այս նպատակով տասնեակ մը գիշերային ժողով-
 ներ գումարեցինք բնակարանիս մէջ, ներկայացուցիչներ ունենալով
 գաղութիս երեք յարանուանական եկեղեցիներէ: Անձամբ այցելեցի
 Գեր. Մ. վրդ. Գազազեանի եւ ամէն զիջողութիւն ընելու յանձնառու
 եղանք այդ միութիւնը պահելու եւ միակ մարմինը ստեղծելու համար:
 Մեր փափաքն էր, քաղաքական միութիւնը պահելէ զատ մեր մանուկ-
 ներու ազգային դաստիարակութիւնը եւ մշակութային բոլոր ձեռ-
 նարկներ[ը] մէկ աղբիւրէ հոգալ եւ մէկ քոնթրոլի տակ պահել: Առար-
 կուեցաւ դաւանութեանց տարբերութիւնը, որու հետեւանքով, նոյն-
 իսկ յանձն առինք մեր դպրոցներու մէջ կամաւոր ընել կրօնական դա-
 սերու հետեւիլը կամ գոհանալ կիրակնօրեայ վարժարաններու դաս-
 աւանդութեամբ, կրօնական դասերը մեր ծրագրէն դուրս ձգելով»³³:

Արսլանի նախաձեռնութեամբ³⁴, Հոկտեմբերին Գաղութային
 Կեդրոնի վարչութիւնը իր ծրագիր-կանոնագիրը «ամբողջ հայ գաղու-
 թիս ընդունելի ընելու համար հրաւիր կարգաց Հայրենակցական
 Միութիւններու, կազմակերպութիւններու եւ կարգ մը ծանօթ
 անձնաւորութիւններու որոնց ներկայացուցիչներէն կազմուած ժողո-
 վին մէջ, քուէարկութեամբ ընդունուած 5 անձերէ կազմուած Յանձ-
 նախումբ մը Վարչութեանս դիւանին հետ խորհրդակցարար»³⁵ յաւե-
 լումներու եւ փոփոխութիւններու ենթարկեց: Վերջիններս 23 Դեկ-
 տեմբեր 1927ին վարչութեան ներկայացուցեցան ու ընդունուեցան,
 «միայն թէ՛ յարանուանութեանց եկեղեցիներու օգնութեան խնդիրը
 առկախ մնաց. հայ-կաթողիկէ եւ բողոքականաց հետ վարչութեանց
 համաձայնութիւն մը գոյանալու պարագային նոյնութեամբ պիտի

ընդունուի սոյն յօդուածը. հակառակ պարագային՝ ինչ որ էր առաջ նոյնութեամբ պիտի մնայ»³⁶:

Ի վերջոյ, այդ համաձայնութիւնը չգոյացաւ: Ինչպէս Արսւան կը գրէ, «ամէն գնով կը փափաքէինք գաղութը մէկ պահել, որպէսզի մեր թիւի նուազ հանգամանքը փոխարինուէր մեր միութեան ուժով: Սակայն, ոչ մէկ կերպով հնարաւոր եղաւ համաձայնութեան եզր մը գտնել: Մեր վերոյիշեալ պայմանները առանց առարկութեան ընդունուեցան մեր Աւետարանական եկեղեցւոյ պատկանող հայրենակիցներու կողմէ, սակայն տեսնելով որ միութեան մեր նպատակը լիովին չէր կարելի գործադրել վերոյիշեալ անջատողական ձգտումներու բերմամբ, ուստի, ստիպուեցանք տարբեր ուղղութիւն մը ընտրել մեզ համար»³⁷:

5 Դեկտեմբեր 1927ին Գաղութային կեդրոնի կեդրոնատեղիին շինութեան համար նախատեսուած պահեստի Փոնտի եկեղեցաշինութեան յատկացումով³⁸, երեք յարանուանութիւններուն բաժանումը փաստական անշրջելի իրողութիւն մըն էր:

Գազագեանի աշխատանքը, հակառակ իր ունեցած սահմանափակումներուն, Առաքելական վարիչի պատուիրակին՝ Գերպ. Ծորթունաթօ Խ. Տեվոթոյի դրուատիքին արժանացած էր 24 Օգոստոս 1925ին, երբ վերջինս կը գրէր. «Եկեղեցական վարչութիւնը մեծ գնահատանքով իմացած է ձեր ջանքերուն մասին՝ մայրաքաղաքս ապրող հայ կաթողիկէներու ի նպաստ: Ան Աստուծոյ շնորհակալութիւն կը յայտնէ՝ գաղութին մէջ ձեր նախանձախնդրութեան ու ջանքերուն գտած շինիչ արձագանգին համար: Ան ամէն կարելին պիտի ընէ որպէսզի կարճ ժամանակին ձեր բաղձանքը իրագործուի՝ այս մայրաքաղաքին մէջ հայ կաթողիկէ եկեղեցի մը ու դպրոց մը ունենալու»³⁹:

Կաթողիկէ վարդապետին իրաւական վիճակը բարելաւուեցաւ իր ժամանումէն չորս տարի ետք միայն: 23 Մարտ 1928ին, Արեւելեան Սրբ. Ժողովը իրեն լիազօրագիր մը դրկեց, արտօնելով որ խորհուրդներու մատակարարումին մէջ հռոմէական ծէսին յարմարէր, Ս. Պատարագի բացառութեամբ: Դեկտեմբեր 1928ին, կաթողիկէ համայնքը իր առաջին ուխտագնացութիւնը կատարեց դէպի Լուխանի հռչակաւոր սրբավայրը՝ 400 հոգիի մասնակցութեամբ⁴⁰:

Որքա՞ն էր հայ կաթողիկէներու թիւը Արժանթինի մէջ այս ժամանակաշրջանին: 1940ի շուրջ, Գազագեանը հայ կաթողիկէներու 5000ի մօտ թիւ մը տեղեկագրած է Նազլեանին, լուսաւորչականներու թիւն ալ 20,000ի շուրջ գնահատելով⁴¹: Սակայն, երկու յարանուանութիւններուն միջեւ 1:4 համեմատութիւնը քիչ հաւանական է, եթէ նկատի ունենանք, որ ընդհանրապէս, սփիւռքահայ որեւէ համայնքի մէջ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ հաւատացեալներու անուանական թիւը 85-90 առ հարիւրի շուրջ կը դառնայ, եւ թէ մնացեալ

տոկոսը կաթողիկէներու եւ աւետարանականներու միջեւ պէտք է բաժնուի⁴² :

1936-55ին Գազազեանի պատրաստած տոմարը, 1958 թուագրեալ ուրիշ արձանագրութիւններու հետ միասին, 380 գրանցուած ընտանիքներու ցանկ մըն է⁴³, որ հաւանաբար ծուխի գործօն եւ ոչ-գործօն անդամներ կ'ընդգրկէ: Ենթադրելով, որպէս առաւելագոյն կարելիութիւն, շուրջ 50 առ հարիւրի պակասաւոր գնահատում մը - ներառեալ Մարտինի հայերը, բոլորովին կղզիացած՝ ընդհանուր համայնքի եւ նոյնիսկ կաթողիկէ համայնքի կեանքէն⁴⁴, եւ երկրի ներքին նահանգները ապրող հայ կաթողիկէներու շնչին գումարը - եւ որդեգրելով հինգ շունչով ընտանիքի գոյութիւնը⁴⁵, կրնանք 2500 հայ կաթողիկէներու աւելի իրատես թիւ մը հաշուարկել, այսինքն՝ Գազազեանի տուած թիւին կէսը: 1943ին, արժանթինահայոց ընդհանուր թիւը 22,000ի շուրջ կը գնահատուէր⁴⁶ :

Ըստ յիշեալ տոմարին, 145 ընտանիքներ անգարացի էին, 97 ընտանիք՝ մարաշցի, իսկ մնացեալները՝ այլ քաղաքներէ⁴⁷ : Թրքախօս երկու համայնքներու գերակշռութիւնը (մօտ 70 առ հարիւր) մէկ կողմէ յաջորդող տասնամեակներու արժանթինահայ կաթողիկէներու լեզուական արագ ուժացումը կը բացատրէ՝ թրքերէնէ սպաներէն արագ անցումով եւ, միւս կողմէ, 1920ին ամբողջովին սպաներէնով հրատարակուած կրօնական պարբերաթերթի մը փաստը: Այս երեւոյթին առընչակից է 1920ականներու հայ առաջին թերթերէն մէկուն՝ Արժանթինի մէջ (1927-1931), թրքերէն (հայատառ, արաբատառ, լատինատառ) սիւնակներու - մերթ՝ ամբողջական էջերու - լոյս ընծայումը, որոնք երբեմն կաթողիկէ համայնքը անմիջականօրէն շահագրգռող տեղեկատուութիւն կը պարունակէին:

Արդարեւ, 1920ին Արժանթինի (եւ Հարաւային Ամերիկայի) հայ նորածիլ մամուլը ունեցաւ իր առաջին կրօնական թերթը, ամբողջովին սպաներէն *Լա Ռեւիսթա Արմենիան* (La Revista Armenia, «Հայկական Հանդէսը»), որ Գազազեանի խմբագրութեամբ հրատարակուած է որպէս «Հայ կաթողիկէ Համայնքի Հոգեւոր Հովուութեան պաշտօնաթերթ»: 10 Նոյեմբերին «միակ թիւ» մը հրատարակելէ ետք, թերթը Ապրիլ 1930ին սկսած է լոյս տեսնել ամսական պարբերականութեամբ եւ իր առաջին շրջանին հրատարակուած է մինչեւ Դեկտեմբեր 1957՝ 18 էջով եւ տետրակի չափով: 1957-71ին լոյս տեսած են քանի մը թիւեր՝ անկանոն կերպով: 1971-75ին նոր շրջան մը ունեցած է՝ իրրեւ երկամսեայ ու եռամսեայ, հանդէսի չափով, 32 էջով եւ երկլեզու (հայերէն-սպաներէն)⁴⁸ :

Առաջին շրջանին, *Լա Ռեւիսթա Արմենիա*, ըստ էութեան, գուտ կրօնական բովանդակութեամբ հրատարակութիւն մըն էր, որ մեկուսապաշտ դիրքորոշում մը ցուցաբերած է հայկական համայնքին

նկատմամբ եւ քիչ տեղեկութիւն պարունակած է կաթողիկէ շրջանակէն դուրս: Այսուհանդերձ, անոր կը պարտինք ցարդ յայտնի հայոց պատմութեան սպաներէն առաջին ամփոփումը մամուլին մէջ (առանց հեղինակի անունի), Նոյեմբեր 1931-Մայիս 1933 թիւերուն մէջ, անկանոն կերպով:

Համայնքը նախապէս էլ Պուէն Մենսախէ (El Buen Mensaje, «Բարի Պատգամը») անունով կիրակնօրեայ լրատու մը հրատարակած էր՝ դարձեալ սպաներէն, որ շարունակած է լոյս տեսնել *Հա Ռեխաթա Արմենիայի* սկզբնաւորութենէն ետք, անորոշ ժամանակով⁵⁰:

18 Սեպտեմբեր 1930ին, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Հոգաբարձութիւնը պաշտօնապէս վաւերացուեցաւ արժանթիւնեան կառավարութեան կողմէ, պահելով «Հայ Կեդրոն» անպաշտօն ու աւանդական անունը, պառակտումին նախորդող ժամանակներէն որպէս յուշ եւ, նաեւ, որովհետեւ իր ու Հայ Գաղութային Կեդրոնի անդամները նոյնն էին⁵⁰: Թերեւս այս իրողութիւնը պատճառ եղած ըլլայ, որ, աւելի ուշ, Հայ Կաթողիկէ Ընկերութիւնը իր անունը փոխէր եւ 24 Յունուար 1932ին Հայ Կաթողիկէ Կեդրոն դառնար (ատենապետ՝ Հ. Մկրտիչ Գազազեան, ատենադպիր՝ Փիէռ Վրթանէսեան)⁵¹: Այս անուանումը միաժամանակ թէ՛ առաքելական եւ կաթողիկէ համայնքներու գատորոշումը շեշտելու փաստ մըն էր, թէ՛ հաւասարումի փորձ մը: Միաժամանակ, Կաթողիկէ Կեդրոնի ծիրէն ներս, արական (Տէր Կոմիտաս Շրջանակ), կնոջական (Հայ Կիներու Խորանի Ընկերութիւն) եւ երիտասարդական առանձին խմբակցութիւններ կազմուած էին:

Նագլեանի յուշերուն հետեւեալ հատուածը, որ հաւանաբար Գազազեանի գեկոյցէն բառացի մէջբերում մըն է, յիշեալ սահմանազատումին համար շատ բնորոշ է. «Գրիգորեան [sic] հայերը երկու շարաթաթերթ ունին՝ «Արմենիա», դաշնակցականներուն կողմէ հրատարակուած, եւ «Շարժում»՝ հնչակեաններուն կողմէ: Մայր տաճար մը եւ երկու մատուռներ ունին, մեծ ժողովասրահ մը կեդրոնական վարժարանով եւ փոքր թաղային դպրոցներով»⁵²:

Զոյգ թերթերուն յարանուանական պատկանելիութեան վերագրումը տարօրինակ է: Արդարեւ, անոնք քաղաքական կուսակցութիւններու կը պատկանէին, որոնք Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ հետ կապ չունին եւ ամէն դաւանանքէ հայեր կ'ընդունին: Նոյնը կարելի է ըսել «փոքր թաղային դպրոցներուն» մասին, որոնք Պուէնոս Այրէսի եւ շրջակայից տարբեր թաղամասերու մէջ ստեղծուած էին, եւ յաճախ ուղղակի կապ չունէին Եկեղեցիին հետ:

Գազազեանի բաղձանքը՝ հայ կաթողիկէ դպրոց մը հիմնելու, անկէ անդին անցած չէ, եւ նշելի է, թէ համայնքը յաջողած չէ - ըստ

երեւոյթին՝ ոչ իսկ փորձած - նման դպրոց մը հիմնել, թէկուզ՝
չարաթօրեայ հիմքով՝⁵³ :

Ի վերջոյ, կ'արժէ յիշել 13 Յունուար 1932ի վատիկանեան հետեւեալ կանոնը, որ հրատարակուած է *Լա Ռեւիսթա Արմենիայի մէջ* - «Խառն կրօնքի եւ տարբեր պաշտամուքներու արգելքի բարձում չկայ, եթէ նախապէս ամուսնացողները երաշխիքներ չներկայացնեն, «ի մասնաւորի երկու սեռերու կաթողիկէ դաստիարակութեան մասին»: Խմբագրական ծանօթագրութիւն մը կը նշէ, թէ «խառն ամուսնութիւն»ը կաթողիկէի եւ «ոչ-կաթողիկէ»ի, «հերձուածողական»ի, ներառեալ՝ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ հաւատացեալներու, կամ «բողոքականի» միացումն էր՝⁵⁴ :

Ամէն պարագայի, միջ-յարանուանական յարաբերութիւնները շատ լարուած չէին: Օրինակ, Տ. Յովհաննէս Ա. Քհնյ. Ամիրսնոյ, որ այդ միջոցին Պուէնոս Այրէսի առաքելական հայոց հոգեւոր հովիւն էր, Նոյեմբեր 1931ին Հայ կաթողիկէ Եկեղեցւոյ ի նպաստ նուիրատուութիւններու ցանկ մը գլխաւորած է, ըստ այդ ամսուան *Լա Ռեւիսթա Արմենիային*՝⁵⁵ :

Նոյեմբեր 1931ին, դարձեալ, միջ-յարանուանական միացումի վերջին փորձ մը կ'ըլլայ: Արդարեւ, Հոգաբարձութեան պաշտօնական ճանաչումէն ետք, Հայ Գաղութային կեդրոնը դատապարտուած էր անհետացումի, բացի եթէ վերածուէր, ինչպէս եղած էր սկիզբը, համազաղութային կազմակերպութեան մը: Հոկտեմբեր 1930ին, Արսլաննոր փորձ մը ըրաւ՝ բարեփոխեալ ծրագիր-կանոնագիր մը յառաջ բերելու այդ ուղղութեամբ՝⁵⁶ : Բայց, ըստ երեւոյթին, փորձը անհետեւանք մնացած է: 12 Հոկտեմբերի վարչական նիստէն եւ 19 Հոկտեմբերի խառն ժողովէն ետք, վարչական յաջորդ նիստը տեղի ունեցաւ տարի մը ետք՝ 2 Նոյեմբեր 1931ին՝ տարբեր միութիւններու ներկայացուցիչներով, որոնցմէ շատեր լիազօրուած չէին: Հոն արձանագրուեցաւ հետեւեալը. «Ժողովիս կողմանէ Տիար Ի. Արսլանի արտօնութիւն տրուեցաւ Հայ կաթ. Ընկերութեան վարչութեան եւ Տ. Մկրտիչ վրդ. Գազազեանի հետ տեսնուիլ եւ հասկնալ թէ համամիտ են ըստ բարեփոխեալ ծրագիր-կանոնագրի տրամադրութեան՝ բոլոր գաղութը ներկայացնող Հ. Գ. կեդրոն մը կազմել: Հակառակ պարագային միայն Հայց. Առաք. Եկեղեցւոյ Հոգաբարձութիւնն է որ պիտի գործէ ու կատարէ Հ. Գ. կեդրոնի վերաբերեալ գործերն ալ, իր ծրագրի ներած չափով»⁵⁷ :

Պատասխանը ժխտական պիտի ըլլար, բայց շահեկան է անոր բովանդակութիւնը, ինչպէս որ արձանագրուած է 16 Նոյեմբերի նիստին՝ Արսլանէն բառացի մէջբերումով. «Ժողովին ատենապետ Տիար Ի. Արսլան՝ նախորդ ժողովին իրեն վերապահուած խնդրոյ շուրջ հետեւեալ զեկուցումը ըրաւ.

«Հայ Կաթ. Եկեղեցւոյ Հովիւ Տ. Մկրտիչ վրդ. Գազազեանի Հետ տեսնուեցայ եւ խնդիրը պարզեցի. թէ եւ վարդապետը համամտութիւն կը յայտնէ, բայց ծրագրէն օրինակ մը ուզեց որ ուսումնասիրէ եւ իրենց վարչութեան հաւանութեան ենթարկէ: Ծրագիրը յանձնուելէ միջոց մը վերջը կը հաղորդէ թէ, «անկարելի կը գտնէ այդ տեսակ Միութիւն քանի որ իրենց ժողովուրդը անպատրաստի են, այսինքն թէ, ազգն ու կրօնքը իրարմէ զանազանելու ի վիճակի չեն»: Հետեւաբար Հ. Գ. Կեղրոնի մասին վերջնական լուծում մը պիտի կատարուի ընդհ. անդամական ժողովով մը»³⁸:

Ըստ երեւոյթին, այդ ժողովը տեղի ունեցած չէ, քանի որ անոր Հետքը չկայ տոմարին մէջ, որ յաջորդաբար կը փակուի 1930-31 ելեւմտական տեղեկագրով: Այս վերջին ճիգը, իր կարգին, շուրջ 15 տարուան փորձերու շրջան մը կը փակէր՝ համազաղութային բնոյթի մնայուն կազմակերպութիւն մը յառաջացնելու համար:

Հետաքրքրական է, միւս կողմէ, Գազազեանի տուած պատասխանը, որ փաստական ապացոյց մը կու տայ Հայ կաթողիկէ համայնքին մէջ (մանաւանդ՝ Արեւմտեան Սփիւռքի) տիրող շփոթին՝ ազգի եւ կրօնքի գաղափարներուն շուրջ:

1930ականներուն յաջորդաբար Խուլիան Ալվարէս 2012 եւ Գաննինկ 1888ի շէնքերը տեղափոխուելէ ետք, 1942ին Հայ կաթողիկէ Առաքելութիւնը Չարքաս 3529ի հողամասին վրայ հաստատուած է: (Երեք տեղադրութիւնները Փալերմօ հայաշատ թաղամասին մէջ են, ուր նաեւ հայ առաքելականներու Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարը կը գտնուի:) Նոր վայրին մէջ պիտի սկսէր Հայ կաթողիկէ համայնքի կազմակերպական կեանքին չորս տասնամեակ երկարող նոր փուլ մը: 1981ին Լատինական Ամերիկայի Հայ կաթողիկէ էքզարքութիւնը կը հաստատուէր եւ նոյն հողամասին վրայ Նարեկի Ս. Տիրամօր եկեղեցին կը շինուէր, որ ներկայիս Արժանթինի միակ Հայ կաթողիկէ տաճարն է:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Այս յոդուածը հայերէն զգալապէս վերամշակուած տարբերակն է 1996ին սպաներէնով կարդացուած ու հրատարակութեան ընթացքի մէջ գտնուող զեկուցումի մը, ներկայացուած՝ Արժանթինի մէջ կաթողիկէ Եկեղեցւոյ պատմութեան նուիրուած Բ. գիտաժողովին. տե՛ս՝ Vartan Matiossian, 'Origenes de la iglesia católica de rito armenio en la Argentina' [Արժանթինի մէջ Հայ կաթողիկէ Եկեղեցւոյ Ակունքները], Segundas Jornadas de Historia Eclesiástica [Եկեղեցական Պատմութեան Երկրորդ Գիտաժողով], Buenos Aires, 10-12 de junio de 1996.

¹Dr. Pascual Tekeyan, *Memorias* [Ծուշեր], Buenos Aires, 1993, էջ 308-325.

²Boghos Levon Zekiyán, 'Le croisement des cultures dans les régions limitrophes de Géorgie, d'Arménie et de Byzance. Prémisses méthodologiques pour une lecture sociographique', *Annali di Ca Foscari*, no. 3, 1986, էջ 86-87.

- ² «Ազգային Լուրեր», *Կոչնակ* (Նիւ Եորք), 14 Ապրիլ 1914, էջ 166. 1916ի համար, 2000 թիւը տրուած է. տե՛ս՝ Աշոտ Արծրունի, *Տարեցոյց Հար[աւային] Ամերիկահայոց, Պուէնոս Այրէս*, 1943, էջ 14.
- ⁴ *Տար Արձանագրութեանց Հայ Բարեգործական Ընկերութեան Արժէնթինի Հայոց (այսուհետեւ՝ Տար)*, 17 Ապրիլ 1917.
- ⁵ Narciso Binayan (hijo=որդի), *La colectividad armenia en la Argentina* [Հայ Համայնքը Արժանթինի Մէջ], Buenos Aires, 1974, էջ 28. Հմտ. նաեւ՝ Narciso Binayan Carmona, *Entre el pasado y el futuro, los armenios en la Argentina* [Անցեալի եւ Ապագայի Միջեւ. Հայերը Արժանթինի Մէջ], Buenos Aires, 1996, էջ 94.
- ⁶ *Տար*, 24 Ապրիլ 1917.
- ⁷ Վարդան Մատթէոսեան, «Պուէնոս Այրէսի Հայ Ազգային Միութիւնը (1918-1920)», *Հայագիտական Հայագիտական Հանդէս*, հ. ԺԸ., 1998, էջ 135.
- ⁸ Binayan, էջ 113.
- ⁹ 1906ին, Պինայեան կը գրէր, թէ «հայ կաթողիկէ ներկայութիւնը, որպէս այդպիսին, անպաշտօն կերպով կը սկսի 1918ին». տե՛ս՝ Binayan Carmona, էջ 189. Յարմարի չէ, թէ հեղինակը ինչ աղբիւր նկատի ունեցած է այս թուադրումին համար.
- ¹⁰ Յ. Պարզեւ[եան], «Հայ Կեդրոնը Եւ Գաղութը», *Հայ Կեդրոն* (Պուէնոս Այրէս), Նոյեմբեր 1933, էջ 8.
- ¹¹ Տե՛ս *Արձանագրութեան Տոմար Հայ Գաղութային Կեդրոնի 1921 Նոյ. 10-1925 Ապրիլ 29* (այսուհետեւ՝ *Տոմար*), 7 Դեկտեմբեր 1921. Լուսանկարչական պատճէնը տե՛ս՝ Ի[սրայէլ] Ա[րսլան], «Թէ Ինչպէ՞ս Ծնունդ Առաւ Հ.Ա.Ե. Հոգարարձութիւնը», *Հայ Կեդրոն*, Յունիս 1942, էջ 91.
- ¹² Դիւանը կազմուած է Ա. նիստին. տե՛ս՝ *Տոմար*, 16 Մայիս 1922.
- ¹³ Անունը յարմարի չէ.
- ¹⁴ *Guía Eclesiástica de la Eparquia Armenia "San Gregorio de Narek"* [«Ս. Գրիգոր Նարեկացի» Հայկական Ծուխի Եկեղեցական Ուղեցոյց], Buenos Aires, 1994, էջ 4.
- ¹⁵ [Mgr. Jean Naslian], *Les Mémoires de Mgr. Jean Naslian, évêque de Trébizonde sur les événements politico-religieux en Proche-Orient de 1914 à 1928*, II. Volume, Vienna, Imprimerie Méchitariste, n.d., էջ 734. Գրաշարական վրիպակով, Գաղազեանի ժամանումի տարին տպուած է «1922», բայց նոյն էջին մէջ Նազլեան յիշատակած է 1924ի անոր տեսակցութիւնը Գերյ. Յարութիւն Մ. Վրդ. Թէքէ-եան, քաղուածաբար բերելով Նազլեանի տուեալները, «10 Յունիս 1922» գրած է առանց անդրադառնալու վրիպակին. տե՛ս՝ Tekeyan, էջ 416.
- ¹⁶ *La Revista Armenia* (Buenos Aires), 10 de noviembre de 1929 (número único), էջ 11. Այս ծառուռը (ներկայիս՝ եկեղեցի) Պուէնոս Այրէսի Հայ կաթողիկէ Նարեկի Տիրամօր այժմու եկեղեցոյ մերձակայքը կը գտնուի.
- ¹⁷ Հմտ. Naslian, էջ 735.
- ¹⁸ Պարզեւ[եան], էջ 9.
- ¹⁹ *Actas de la Institución Administrativa de la Iglesia Armenia* [Հայաստանեայց Առաքելական Եկեղեցոյ Հոգարարձութեան Տոմար] (այսուհետեւ՝ *Actas*), 29 de noviembre de 1925. Հայաստանեայց Առաքելական Եկեղեցոյ Հոգարարձութեան տոմարները հայերէնով եւ սպաներէնով կը պահպանուին. Մենք միայն կրցած ենք աչքէ անցրնել սպաներէն տարբերակը. Տե՛ս նաեւ՝ *Տոմար*, 4 Դեկտեմբեր 1925, ուր միայն կ'ըսուի, թէ «Եկեղեցոյ եւ Դպրոցի շինութեան համար խորհրդակցական ժողովը հրաւիրուեցաւ Նոյ. 29 Կիր. ժամը 15ին. ներկայ գտնուեցան 24ի մօտ անհատներ... Սակայն ներկայ եղողներ բաւական խորհրդակցութեան եւ վիճարանութիւններէ վերջ ստորագրեցին գրութիւն մը

որով Ազգային Եկեղեցւոյ եւ Դպրոցի շինութեան իրենց բարոյական եւ նիւթական աջակցութիւնը պիտի բերեն: Հոս նոր Հաստատութեան մը հիմնադրութեան խօսք չկայ:

³⁰ *La Revista Armenia*, 10 de noviembre de 1929, էջ 11.

³¹ Արժանազրութեան Տետրակ Հայ Գաղութային Կեդրոնի 1925 (այսուհետեւ՝ Տետրակ), 23 Ապրիլ 1926. Ի. Ա., «Ինչպէ՞ս Ծնունդ Առաւ», *Յուլիս* 1942, էջ 107.

³² Տետրակ, 23 Մայիս 1926.

³³ Նոյն, 16 Յուլիս 1926.

³⁴ Ի. Ա., «Ինչպէ՞ս Ծնունդ Առաւ», *Յուլիս* 1942, էջ 107.

³⁵ Տետրակ, 6 Օգոստոս 1926.

³⁶ Նոյն, «Տեղեկագիր Հայ. Գաղթ. Կեդրոնին Վարչութեան 926 Յուլիսին-927 Ապրիլ 30 Տարեշրջանին Համար»: Այս տեղեկագիրը կարգացուած է 5 Յուլիս 1927ի անդամական ընդհանուր ժողովին:

³⁷ Naslian, էջ 736.

³⁸ Ի. Ա., «Ինչպէ՞ս Ծնունդ Առաւ», *Օգոստոս* 1942, էջ 120.

³⁹ Նորայր Ա. Քչնյ. Տէր Խորէնեան, «Կէս Դարու Պատմական Թոռուցիկ Ակնարկ Մը Արժանթիւնի Հայց. Առաք. Եկեղեցւոյ Հաստատման Եւ Զարգացման վրայ», անտիպ, Պուէնոս Այրէս, մօտ 1960, էջ 5: Մէջբերման մէջ նշուած Հայր Եղիշ. Գաղազեանը նոյն ինքն է. Մկրտիչ Գաղազեանն է, որուն անունը Քրանսերէն Jean-Baptiste Kazecian կը դրուէր: Տե՛ս նաեւ՝ Արժրունի, էջ 25, որ Տէր Խորէնեանի տեսակէտները վերաշարադրած է:

⁴⁰ Մրազիր-Կանոնագիր Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ, Պուէնոս Այրէս, 1930, էջ 14: Հմմտ. *Actas*, 4 de noviembre de 1928.

⁴¹ Օրինակ, Սիմոն Թիւթիւնեան 1980ականներուն Բ. փոխ-ատենապետ եղած է:

⁴² Մրազիր-Կանոնագիր, էջ 14.

⁴³ Ի. Ա., «Ինչպէ՞ս Ծնունդ Առաւ», *Օգոստոս* 1942, էջ 120-121.

⁴⁴ Տետրակ, 20 Հոկտեմբեր 1927.

⁴⁵ Նոյն, «Տեղեկագիր Զ. տարեշրջանի, 1927 Մայիս-1928 Մայիս»:

⁴⁶ Նոյն, 27 Դեկտեմբեր 1927.

⁴⁷ Ի. Ա., «Ինչպէ՞ս Ծնունդ Առաւ», *Օգոստոս* 1942, էջ 120-121.

⁴⁸ Նոյն, *Յուլիս* 1942, էջ 108.

⁴⁹ Naslian, էջ 736.

⁵⁰ Արժանթիւն (Պուէնոս Այրէս), 31 Դեկտեմբեր 1929, էջ 2, 1925-29ին 83 կնուներ եւ 37 պսակներ տեղի ունեցած էին. տե՛ս՝ *La Revista Armenia*, 10 de noviembre de 1929, էջ 13-14.

⁵¹ Naslian, էջ 737.

⁵² 1974ին, Արժանթիւնի մէջ 6000 Հայ կաթողիկէներու թիւը կը արուէր, զոր Պինայան աթո՛մ կը նկատէ «չափազանցուած»: տե՛ս՝ Binayan, էջ 80. Binayan Carmona, էջ 215. Լատինամերիկեան Հայ կաթողիկէ կղերականներու 1972ի Համագումարը 60,000 հաշուած էր արժանթինահայութեան թիւը. տե՛ս՝ Binayan Carmona, էջ 205.

⁵³ Tekeyan, էջ 418.

⁵⁴ 1942ին, Մարտինի Հայերու Հանրագումարը 43 ընտանիք էր, իր հիմնական Հաւաքատեղիին՝ Պուէնոս Այրէսի Հարաւը դանուող Քիլմէս քաղաքին մէջ. տե՛ս՝ Binayan Carmona, էջ 213.

⁵⁵ 1936ի Պուէնոս Այրէսի Դ. մարդահամարը Հայ մօրմէ ծնած երեք զուակներու միջին մը կը բացարարէր. տե՛ս՝ Binayan, էջ 71-72. Binayan Carmona, էջ 214.

⁴⁶Պուէնոս Այրէսի եւ արուարձաններու համար՝ «չուրջ քսան հազար» եւ Գորտոպալի համար՝ «չուրջ 1800»․ տե՛ս՝ Արծրունի, էջ 243, 309. Binayan Carmona, էջ 205.

⁴⁷Tekeyan, էջ 418.

⁴⁸Վարդան Մատթէոսեան, «Հարաւային Ամերիկայի Հայ Մամուլը, Սկիզբէն Մինչեւ 1950», Հայկազեան Հայագիտական Հանդէս, հ. ԺԹ., 1999, էջ 207.

⁴⁹*La Revista Armenia*, 10 de noviembre de 1929, էջ 13.

⁵⁰Actas, 16 de marzo de 1930.

⁵¹*La Revista Armenia*, marzo de 1932, էջ 24.

⁵²Naslian, էջ 737.

⁵³1956ին, Պուէնոս Այրէսի Մխիթարեան Վարժարանին հիմնադրութիւնը՝ որպէս առաջին հայկական ամբողջօրեայ դպրոց, կապ չէ ունեցած տեղի հայ կաթողիկէ համայնքին հետ:

⁵⁴*La Revista Armenia*, junio de 1932, էջ 43.

⁵⁵*La Revista Armenia*, noviembre de 1931, էջ 14.

⁵⁶Տեարակ, 12 եւ 19 Հոկտեմբեր 1930.

⁵⁷Նոյն, 2 Նոյեմբեր 1931.

⁵⁸Նոյն, 16 Նոյեմբեր 1931.

THE ORIGINS AND DEVELOPMENT OF
THE ARMENIAN CATHOLIC COMMUNITY IN ARGENTINA
(Summary)

VARTAN MATIOSSIAN

The article first recounts the earliest attempt in 1917 by Arabic speaking Armenian Catholics from the Mardin area in the Ottoman Empire to receive certificates from the Armenian Apostolic Church authorities in Buenos Aires affirming their Armenian identity. These people had arrived in Argentina before the outbreak of the First World War. Next the article moves on to Father Hantouche, a member of the Armenian Catholic congregation of Bzommar, who arrived in Buenos Aires in 1922 and stayed there for a year. The article then details the activities of the Armenian Catholic priest, Hovhannes (Jean-Baptiste) Kazezian, who arrived in Argentina in 1924. He played a leading role in the coming years in organizing the Armenian Catholics in the country and was involved in a number of ultimately abortive attempts to set up a single Armenian authority to represent all Apostolic, Catholic and Evangelical Armenians in Argentina. Kazezian was also instrumental in inaugurating in 1929 *La Revista Armenia*, the official Spanish language publication of the Armenian Catholic community in Argentina.